ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Աշոտ Մանուկյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Բեռլին, (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)/ 2017թ. նոյեմբերի 20-21-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

KfW բանկի ֆինանսավորմամբ էներգետիկ ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերի հետագա ընթացքի և ֆինանսավորման ուղղությունների քննարկում

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Քննարկվեցին KfW բանկի ֆինանսավորմամբ իրականացվող բոլոր ծրագրերը: Առանձին քննարկման առարկա են դարձել Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի և համապատասխան ենթակայանների տեխնիկական և ֆինանսավորման խնդիրները և «ՋՌՀԿ/Ախուրյան գետ, Փուլ 1, Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում» ծրագրի հետ կապված հարցերը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպում ունեցա Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության պետքարտուղար Ֆրիդրիխ Կիչելթի հետ:

Կարևորելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և KFW բանկի դերը Հայաստանի էներգետիկայի ոլորտի զարգացման, վերազինման և արդիականացման գործում՝ իմ կողմից ներկայացվեց ծրագրերի հետ կապված ՀՀ կառավարության մտադրությունները:

Պետքարտուղարը նշեց, որ Գերմանիայի կառավարությունը մեծ կարևորություն է տալիս Հայաստանի հետ համագործակցությանը և պատրաստակամություն հայտնեց շարունակելու աջակցությունը իրականացվող ծրագրերին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակական աշխատանքներ տանել ծրագրերի իրականացման նպատակով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների
նախարար Ա.Մանուկյան